ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

"01" "06" 201 թ.

թ/ 18/44

ՀՀ Հանրային խորհրդի նախագահ
պարոն Վազգեն Մանուկյանին

Հարգելի պարոն Մանուկյան,

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար Ազգային ժողովի նախագահը ձևավորում է մրցութային խորհուրդ, որը կազմված է Սահմանադրական դատարանի նախագահի, Մարդու իրավունքների պաշտպանի, Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների, Հանրային խորհրդի և Փաստաբանների պալատի կողմից նշանակված մեկական անդամներից:

Քանի որ մրցութային խորհրդի կազմում թեկնածու առաջադրելու և ընտրելու վերաբերյալ որևէ տեղեկատվություն առկա չէ Հանրային խորհրդի պաշտոնական կայքում, ուստի խնդրում ենք տեղեկացնել՝ ինչպես է իրականացվելու Հանրային խորհրդի կողմից թեկնածու առաջադրելու գործընթացը և երբ է այն սկսվելու:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանրային խորհուրդը թեկնածու է առաջադրում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, խնդրում ենք սույն գրությունը հիմք ընդունելով՝ դիտարկել Ձեր կառույցի կողմից «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության ներկայացուցչին առաջադրելու հնարավորությունը:

ԹԻՀԿ-ն ունի կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում բազմամյա փորձ, որի առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու ու ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում: Կազմակերպության նպատակներից է արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությանը և թափանցիկ ու հաշվետու կառավարմանը աջակցելը: Մեր կազմակերպության գործունեության մասին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ www.transparency.am հղմամբ:

ԹԻՀԿ կողմից առաջարկվող թեկնածուի վերաբերյալ մանրամասները կներկայացվեն գործընթացների և մեր առաջարկի վերաբերյալ Ձեր դիրքորոշման մասին տեղեկատվությունն ստանալու դեպքում:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության համար:

Հարգանքով՝

ԹԻՀԿ գործադիր տնօրեն **Սոնա Այվազյան**

Հայաստան, Երևան, 0019, Սարյան 12, 5-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 569589, 569689 • Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am